ԳԱԱ

# Պարզաբանում

**Ձեր թերթի ս.թ. հունվարի 22-ի համարում տպագրված «Ակադեմիական գլուխգործոց» հոդվածի կապակցությամբ ներկայացնում ենք մեր պատասխանը՝ Ձեր թերթում հրապարակելու համար:**

ՀՀ ԳԱԱ տպարանի հետ կապված որեւէ «մութ, գաղտնի եւ հերթական գործարք» ակադեմիայում չի իրականացվել: Ներակադեմիական խնդիրները ՀՀ ԳԱԱ-ն որոշել եւ այսուհետ էլ որոշելու է՝ հաշվի առնելով համաակադեմիական ընդհանուր շահերը: ՀՀ ԳԱԱ նախագահության 2002թ. սեպտեմբերի 25-ի որոշմամբ տպարանը հանվել է «Գիտություն» հրատարակչության ենթակայությունից: ՀՀ ԳԱԱ նախագահությունը տպարանը չի վաճառել եւ մտադիր չէ վաճառել կամ վարձակալության հանձնել որեւէ այլ կազմակերպության: Նշենք նաեւ, որ ԳԱԱ նախագահության ֆինանսական գործունեությունը իրականացվում է ՀՀ գործող օրենքներին համապատասխան: Տպարանի նոր տնօրեն է նշանակվել Ս.Կարապետյանը (նա ազգակցական որեւէ կապ չունի փոխպրեզիդենտ Յու. Շուքարյանի հետ), որը նախկինում աշխատել է այդ նույն տպարանում որպես փոխտնօրեն եւ ունի մասնագիտական եւ կազմակերպչական անհրաժեշտ ունակություններ: «Գիտություն» հրատակչությունը նախապես տեղյակ է եղել այս ամենին: Ինչ վերաբերում է Վիկտոր Համբարձումյանի «Կյանքի դրվագներ» հուշագրությանը, ցավոք, նրանում կան լեզվաոճական սխալներ:

*ՀՀ ԳԱԱ ՓՈԽՊՐԵԶԻԴԵՆՏ,*
*ԱԿԱԴԵՄԻԿՈՍ-ՔԱՐՏՈՒՂԱՐ*
*Վ.ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ*

*«ԳԻՏՈՒԹՅՈՒՆ»*
*ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ*
*Վ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ*